

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Ստորագրողքացիք դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция „Мусако“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առ սուտեան 10—2 ժամ
(Նացի կիրքի և սոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՊԱՅՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին տե-
սույթի մէջ, Ներքին լուրերը:—Արտաքին տե-
սույթի մէջ: Ֆրանսիա:—Եւրոպայի լուրերը:—Մը-
շակի ինտելիգենցիան:—Քայտարարութիւններ:—Տե-
ղեկացոյց:—Բանասիրական: Ոսկի արքայադ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ

Մարտի 15-ին Եւրոպայի քաղաքական
տեսույթի մէջ, Ներքին տեսույթի մէջ, Ֆրանսիա:
Մըշակի ինտելիգենցիան:—Քայտարարութիւններ:
Տեղեկացոյց:—Բանասիրական: Ոսկի արքայադ:

Մարտի 15-ին Եւրոպայի քաղաքական
տեսույթի մէջ, Ներքին տեսույթի մէջ, Ֆրանսիա:
Մըշակի ինտելիգենցիան:—Քայտարարութիւններ:
Տեղեկացոյց:—Բանասիրական: Ոսկի արքայադ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

(Առաջին մասը)

Մարտի 15-ին Եւրոպայի քաղաքական
տեսույթի մէջ, Ներքին տեսույթի մէջ, Ֆրանսիա:
Մըշակի ինտելիգենցիան:—Քայտարարութիւններ:
Տեղեկացոյց:—Բանասիրական: Ոսկի արքայադ:

Կէս զի նա կարողանար այդ գոր-
ծերով պարծենալ: Մինչև օգոս-
տոսի 15, երբ փակվեցաւ անգլիա-
կան պարլամենտը, արեւելեան խըն-
դիրը այնպիսի դրութեան մէջ էր
գտնվում, որ անգլիական միսիս-
տրութեան ոչինչ առիթ չէր տա-
լիս պարծենալու իր քաղաքական
ճարպիկութեամբ: Ընդհակառակը
վերջին ժամանակները Մարտի
աղբերակութիւնը թուրքաց կառա-
վարութեան վրա թուլացած է և
սուղթանը վերջին ժամանակները
աշխատում է վայր գցել իր վրա-
յից Մարտի հոգաբարձութիւնը:
Մարտի հոգաբարձութիւնը, որի համար
ահագին փողեր ծախ-
սվեցան և բազմաթիւ մարդիկ
զոհվեցան, չէր հասցրեց ցանկալի
նպատակին: Մարտի ձեռք բե-
րած արտօնութիւնները Մարտի
Մարտի չափազանց աննշան են:
Մարտի պատերազմը զու-
լունների հետ վերջացած չէ և
զեռ երկար կը շարունակվի:

Երբ զաւառի մէջ առակ էր դարձել, ամեն մի
խրճուղի և խառնաշփոթ բանի համար ասել,
թէ դա պարտի Մարտի խառնաշփոթ է:
Մարտի Մարտի անգլիական մարդ էր: Գիրը
նրան այնքան առեւել էր, որքան ստանան: Հաշ-
ուապահութիւն ստանալը չէր կար նրա խառնու-
թեան: Այս և—տուր—այս բառի խառնու-
թեան էր հասկացել,—մի ձեռքով առնել, միւսով
տալ, այսպէս էր հասկանում նա վաճառականու-
թիւնը: Վերջինիս հետ գործ ունէր նա: Հաշիւ,
ասացվեք, չէր պահում. նրա ամբողջ առեւտրական
գործողութիւնների հաշուետուարը իր գլուխն էր:
Մի զարմանալի յիշողութիւն իշխում էր ամեն
բանի վրա: Նա գիտէր քանի տոնակ ապրանքներ
կան իր խանութում, այս ինչ տեսակից սրբան է
ծախել, որքան մնացել, ինչ է իւրաքանչիւրի
գինը, քանիով պէտք է ծախել, որ վստակ մնայ,
—բոլորը գիտէր նա: Գիրը նա գործ էր դնում
միայն պարտականւորի համար, երբ չար մարդիկ
սովորաբար նրան պարտաւորակցութիւն առնել:
Այս բանի մէջ նրա յիշողութիւնը նոյնպէս հրաշալի
գործ էր կատարում: Նրա կայացեցէ՛ք ձեզ մի արկ-
ղիկ, լցված հազարաւոր թղթերի կտորանքով:
—Հրանք բոլորը զանազան անձնորի պարտաւոր-
ականներ են, որոնք խառնութիւն ապրանքների նման,
անկարգ խառնած են միմեանց հետ: Բայց Մարտի
սեանը բոլորը ճանաչում էր, թէ որը ունէր
պատկանում, թէ և ինքը կարող էր գիտէր: Եւ
երբ յայտնվում էր մի պարտական, նա խառն
շփոթում էր շատերի մէջից նրա մուրհակը, և ա-
ռանց կարող տալու, ստանալ էր, թէ որքան է
անցել ժամանակից, որքան կը լինի տուրքը, որ-
քան իսկական գումարը և այլն: Ոչ միայն այդ,
այլ տան տալիս հնացած մի հաշիւ նա կարող
էր կայացնել տեղի տեղը ասել: Եւ իր կեան-
քի մէջ պատահած բոլոր անցքերը նա կարող էր
մանրամասնաբար պատմել, թէ ինչպէս, կամ որ-
տեղ պատահեց, որ թուին, որ օրը, որ ժամին,
նոյ կար այնտեղ, ինչ խոսեցին և այլն: Յիշողու-
թիւնը նրա մէջ այն աստիճան զարգացել էր, որ
զերբնական բնաւորութիւն էր ստացել: Եւ այս
պատճառով նա հաշուապահութեան կարողութիւն
չէր զգում. երբ մի բան պակաս էր խանութից,

Ինչ կը վերաբերի Մարտի
ներքին տեսույթի գործերին, կառա-
վարութիւնը նոյնպէս չէր կարողա-
ցաւ պարլամենտի նիստերի ըն-
թացքում առանձին աշխույթիւն
ունենալ: Նրա նշանաւոր օրէնք-
ներ միայն ընդունվեցան պարլա-
մենտում: մէկը զօրքերի կարգա-
պահութեան օրէնքը, իսկ միւսը
իրանդական համալսարանի օրէն-
քը, որ չէր բաւականացրեց իրան-
դացիներին:

Պրուսական ազգային ժողովի
անդամների ընտրութեան ժամա-
նակը արդէն հասել է, բոլոր լրա-
գիրները և քաղաքական կուսակ-
ցութիւնները զբաղված են այդ
ընտրութիւններով:

Մի ժամանակից, երբ իշխան
Բիսմարկ սնտեսական մի բանի
օրէնքներ անցկացնելու նպատա-
կով դաշն կապեց պահպանողա-
կան և կղերական կուսակցութիւն-
ների հետ, նրա պաշտօնական լը-
րագիրները չէին դադարում ամեն

միջոցներով սեպտեմբեր ազգային ա-
զատամիտ կուսակցութեան ան-
դամներին, նոյն բանը անում էին
և այս վերջինները: Իշխան Բիս-
մարկ և իր նախկին կուսակիցները
բոլորովին թշնամական դիրք են
բռնել միմեանց վերաբերութեամբ:

Մի թշնամութիւնը այն աս-
տիճանի է հասնում, որ գերմա-
նական առաջին միսիստրի պաշ-
տօնական լրագիրները, կամենալով
որ պրուսական ազգային ժողովի
համար որքան կարելի է բիշ ան-
դամներ ընտրվեն ազատամիտնե-
րից, սկսել են հաւատացնել հա-
սարակութեանը, որ ազատամիտ-
ները սօցիալիստների կողմն են
անցել և պաշտպանում են այս
վերջինների քաղաքական պրօգրա-
մը:

Միջոցաւ շաբաթվայ մեր յո-
դուածի մէջ ասել էինք, որ առ-
ստիական առաջին միսիստրի հը-
րաժարականի լուրը հետզհետեւ
տարածվում է: Լրագիրները ար-

կամ մի բան գողացվել էր, անկարելի էր, որ նրա
նկատողութիւնը անցար միայն:
Յիշեալ յատկութիւններին հետ, չափազանց իր
գործին արի և զգուշ էր Մարտիստը: Ժամանակ
զեռ առաջին զանգակի ձայնը չէր լսված, նա
միշտ հազնված և պատրաստ էր: Տանից դուրս
գալով, իր անխափան սովորութեան համաձայն,
նա առաջ գնում էր ժամ: Այնտեղ միտում էր
մինչև վերջը: Ժամից ուղղակի դիմում էր բազար,
երբ արեգակը դեռ ծագած չէր լինում: (Ժամը
այս կողմերում սովորաբար շուտ է արձակվում):
Միջոցաւ մի մեծ զամբիւղ թնկց քաղ զգած,
վաղուց արդէն սպասում էր աղային, մէջոյնում
(հրապարակում) կանգնած: Աղան նոյնպէս առաջ
կը գար մէջոյնը, որ տեսնէր, թէ գիւղացիք
ինչ են բերել ծախելու: Բոլոր գիւղացիներին ծա-
նաչում էր նա անուններով, հօր, որդիների և
մինչև անգամ նրանց կնիքների անուններով: Ամե-
նին կը մօտենար, ամենի հետ քաղաքութեամբ
կը խօսէր, ամենի քէֆը կը հարցնէր և նրանց
բերած մթերքի գինը կը տեղեկանար, թէ և իրան
պէտք չէին և գնելու միտք չունէր: Գիւղացիք
միշտ ուրախանում էին, որ այնպիսի մեծ աղայ,
այնքան բարի էր, որ իրանց մարդի տեղ էր դը-
նում:

Բայց արդէ միայն գիտէ, թէ ինչու է այնքան
սիրով պարտվում մեղրի փեթակի չորջր: Բաւա-
կան էր, որ գտնէր մի զնամաղիւղացի, որ ձուկն,
նոր կարագ, պանիր, կամ հաւ էր բերել ծախելու:
Նրան բոլորովին կը յղենցնէր զանազան խօսքերով,
թէ նրա համարուհի էր հօր հետ լաւ բարեկամ է
եղել, թէ նրան շատ կաւարժութիւններ է արել, և ու
գիտէ, հազարումէկ խառնուրդներով աւատ—ա-
ռատ յոյսեր կը տար, մինչև նրան խելքից կը
հանէր, և ուզած բանը սովորականից մի քանի
կոպէկ պակասով կառնէր: Մարտիստը սիրում
էր իր տան ամենօրեայ պաշարեցէնը իր ձեռքով
գնել: Պտուղի ձեռքով միայն լաւ է փուշ քաղել:
—այդ էր նրա սովորական առածը: Մէջոյնում
իր գործը վերջացնելուց յետոյ, նա ամբողջ ժամա-
նակ քաղ կը գար միջոցաւ ծառերի, մաղաճառ-
ներին, և հացթուխների խանութները առնէր, և
լաւ բեռնաւորելով Միջոցաւ, կուղարկէր տուն:

Գալով խանութը, Մարտիստը նրա զբաղը
կանգնած և միշտ պատրաստ կը գտնէր իր աչա-
կերանները: Առաջ մտնող կնքած փակ կողպէնները
ուշադրութեամբ կը քննէր, յետոյ բանալիները,
որ միշտ իր մօտ էր պահում, կը տար աչակերտ-
ներից մէկին, որ դռները բաց անէին: Իսկ ինքը
երեսը կը խաչակնքէր և կը մտնէր խանութը:
Միջոցաւ արդէն ծախ նման իր տարած բաները
տանը հասցրած և վերադարձած էր լինում: Նա
սկսում էր խանութի դռների առջևը աւելով
մաքրել, ջուր սրսկել, ապրանքների փոշին թփափ
տալ, և միւս գործախառնութիւններին օգնել, ապրանք-
ները դարակու և կարգի դնելու: Որպէս հայ վա-
ճառական, Մարտիստը սովորութիւն ունէր ամեն
առաւօտ իր խանութի ապրանքները մի նոր ձևով
դարակ տալ, որ առեւտրու աչքին ցոյց տայ,
թէ նոր ապրանքներ է ստացել: Այս աշխատու-
թիւնը փոքր հոգս չէր պատճառում նրա առեւ-
տրական ամեն ծառայողներին: Բայց մի բան լաւ
էր, որ նա խանութի լուսամուտների ապակիները
երբեք մաքրել չէր տալիս: Վերջինս դուրսը
մութ լինի, այնքան ապրանքը աչքի լաւ կերակայ,
ստանալ էր նա:

Այս գործողութիւնները կատարվում էին ամեն
օր և ամեն առաւօտ, միշտ անփոփոխ, միշտ մի
և նոյն եղանակով: Մարտիստը չափազանց ճշ-
դութիւն սիրող մարդ էր, մանաւանդ այն պար-
տաւորութիւնների մէջ, որ ինքը իրաւունք էր հա-
մարում ուրիշներից պահանջելու: Իսկ իր պարտա-
ւորութիւնների մէջ նա միշտ բացառական եղանա-
կին էր հետևում:
Չմոռալ պատմիկ ցրտանքի (նա իր խանու-
թում երբեք կրակ չէր վառում) և ամառայ
սաստիկ տաքերին Մարտիստը առաւօտից մինչև
իրեկուն իր խանութումն էր գտնվում: Ոչ մի
դէպք չէր կարող նրան հեռացնել իր սիրելի ապ-
րանքների մօտից: Մարտիստը չափից դուրս կա-
կածոտ մարդ էր. ոչ չէր վրա հաւատարմութիւն
չունէր. նա մինչև անգամ չէր հաւատում իր կնոջը,
որդուն և աղջիկներին,—բոլորին դողեր էր համա-
րում: Նրա կարծիքով, զոգ չէին միայն գիւղացի-
ները, որովհետեւ իրանք էին, ոչինչ չէին հասկա-
նում: Իսկ ու իր խելը ունէր, անպատճառ, կը

ներկից, դա
 դայի հայրը
 Աւերկած
 կողքերի հո
 չմտածածի
 վրում էր
 թողված շ
 նու թիւնն
 վարպետ չ
 գուժիւն չ
 քանդվիւն
 նացել էր:
 ւառի առ
 դան: Այս
 րուժեամբ
 Ալի փոք
 մէջ: Պար
 բորբ հեմ
 դա էլ
 րոյնքորով,
 մաքառու
 ամէնք դե
 հեռ. քերէն
 Կեանքը
 ների մէջ
 շրջապատ
 նախ, նոյն
 կերպով,
 ցել տան
 թիւն չէր
 բը անցնո
 խարի՛ մէ
 նոր ձև էլ
 կեանքի
 թիւն չէր
 հետ տիւր
 անշարժո
 ներ կեան
 չէնքերի
 ուրբմն պ
 մաշված
 չէր փոխ
 միջով նե

պոչաւոր լուրեր են տարածել. օրինակ նրանք ասում են որ մինիստրները խորհուրդը զբաղ-վել է Բյանկիի և Ֆէրրիի օրէնքների հարցով, և թէ իբր նա վճռել է, որ վերաքննութեան մասնաժողովը պէտք է ոչնչացնէ Բյանկիի ա-նուան վերաբերեալ բոլոր քուէները: Այս լուրը բոլորովին ուղիղ չէ. ճշմարիտ է, որ մինիստր-ների խորհուրդում Բյանկիի հարցը փոքր ինչ վիճաբանութեան առարկայ է դարձել, բայց և այնպէս նրա քուէների ոչնչացնելու մասին ամենեւին խօսք անգամ չէ եղած: Բացի այս՝ կառավարութիւնը շատ լաւ հասկանում է, որ վերաքննութեան յանձնաժողովը երբեք չէ կարող դատաւոր համարվել կանդիդատի ընտ-րելի և անընտրելի լինելու մասին, որովհետեւ վերաքննութեան յանձնաժողովին յանձնված է միայն հաշիւ տալ թէ այս ինչ կամ այն ինչ կանդիդատ որքան քուէ ստացաւ. իսկ նա երբեք իրաւունք չունի այս ինչ կամ այն ինչ կանդիդատի վրա իր սեփական կարծիքը յայտ-նել: Այս բանի մէջ կառավարութիւնն իր բո-լոր յոյսը դրել է պատգամաւորների ժողովի վրա, որի օժանդակութեամբ նա յոյս ունի ոչնչացնել Բօրդօի ընտրութիւնը, եթէ միայն Բյանկիի ձայների առաւելութիւն կը ստանայ:

Իսկ ինչ կը վերաբերի Ֆէրրիի օրէնքներին, կառավարութիւնը դրա մասին մինչև անգամ չէ էլ մտածում. բայց և այնպէս կան հան-րապետականներ, որոնք կամենում են որ նա-հանգական խորհրդարանները լուեն Ֆէրրիի օրէնքների մասին, և այդ այն պատճառով, ասում են նրանք, որովհետեւ պատգամաւոր-ների ժողովը արդէն տուեց այդ մասին իր համաձայնական քուէն, և անհատն էլ արդէն տալու վրա էր. իսկ այժմ նահանգական խոր-հրդարանների մեծամասնութեան կարծիքները կարող են վատ հետեանքների հասցնել, և վնաս-սել գործին հէնց այն ժամանակ, երբ նա ազ-գային ժողովի մէջ դուռ չէր հասել ցանկալի ամբողջութեանը: Բայց հասարակական կար-ծիքն այնպէս աստիկ է դեպքված Ֆէրրիի օ-րէնքներով, որ գրեթէ անկարելի կը լինէր

նահանգական խորհրդարանին չը միջամտել: Սրա փոխարէն հանրապետականները բոլորն էլ համաձայնութեամբ և միաբերան առա-ջարկում են նահանգական ընդհանուր խոր-հրդարաններին, որ նրանք անպատճառ պա-հանջեն, որ ուսումը ձրիավարժ, ստիպեցու-ցիչ և աշխարհական լինի, և հանրապետա-կանները այս կարծիքը համաձայն են նահանգական ընդհանուր խորհրդարաններից շատերը:

Սրդէն չափադանց երկար ժամանակ է, որ պատգամաւորների ժողովն զբաղված է այս հարցով: Այժմ անհրաժեշտ է, որ նահան-գային ընդհանրական խորհրդարանները տա-լին իրանց հաւանութիւնը, և սրանով մի-ջոց տային ժողովրդական իշխանութիւններին կարելի եղածին չափ շուտ վճռել մի հարց, որ արդէն վաղուց հասունացած է:

Տուրուզի աշխարհական ծխական ուսումնա-րանի աշակերտների պարգևաբաշխութեան ժամանակ, մատաղահաս աղջկերք ու տղայք պատկեր նուիրեցին հանրապետութեան ար-ձանին, որ դրված էր է ս տ ր ա դ ի (բարձ-րութիւն) վրա. այդ միջոցին զինուորական երաժշտութիւնը ածուճ էր մ ա ր ս էյ լ է գ, որին նուիրվում էին երկարատեւ ծափահա-րութիւններ:

Միջոցաւ այստեղ խորին զգացմունքներով ծափահարում էին հռչակաւոր մ ա ր ս էյ լ է գ ի ն, Լիծում մի քանի մոլորամիտ երի-տասարդներ իրանց ոտքերի հարուածներով և սուրկով ծաղրում էին ցիգանների մի երաժշ-տութիւն, որ նոյնպէս ածում էր մ ա ր ս էյ լ է գ, և այսպէսով այդ երիտասարդները թէ անպատուում էին մի այդպէս բարձր ազգային տոնախմբութեան յիշատակը, և թէ խանգա-րում էին հասարակաց երաժշտական կոնցեր-տը: Այս անկարգութիւններից բաւական ծանր հետեանքներ յառաջացան: Մի փոքրիկ խումբ միջոց յաջորդաբար միշտ աղմուկներ բարձրացնել, և խանգարել հասարակաց կոն-ցերտը, և յիշաւի մի քանի երեկոյ շարու-

նակաբար հէնց որ երաժշտութիւնն սկսում էր ածել ազգային եղանակը, խիտն ոտքերի և սուրկով. ձայներ էին լսվում:

Այդ յանդուգներն իրանց անկարգութիւն-ներն մինչև այնտեղ հասցրին, որ պոլիցիան այդ բանի վրա մի առանձին ուշադրութիւն դարձրեց, և հասաւ այն եզրակացութեանը, որ զա կատարեալ թշնամական ցոյցեր էին մի բուռը երիտասարդների կողմից. պոլիցիան սկսեց հետախուզել, և մի երկու օրվայ մէջ տասներեք հոգի կալանաւորեց, կալանաւորված-ները մէջ կան նոյնպէս և երկու օրիցէնէն:

Լրագիրները հրաւիրում են պատերազմա-կան մինիստրի ուշադրութիւնը այս դէպքի վրա, և նրանք ասում են, որ մանաւանդ Լիո-նում այս առաջին անգամը չէ, որ զինուո-րականներն այսպիսի քաղաքական ցոյցեր են անում. յետոյ այդ մի և նոյն լրագիրները յոյս են յայտնում, որ պատերազմական մի-նիստը չի գլխաւոր առանձին ուշադրութիւն դարձնել այս բանի վրա, և հարկաւոր եղած միջոցները ի գործ դնել այս անկարգութիւն-ների առաջն առնելու. նրանք ասում են, որ այսպիսի թշնամական ցոյցեր աշխարհական-ների կողմից այնքան կատարեցուցիչ չեն, որ-քան զինուորականների կողմից, որոնք աշխիւ խօսք են տուել, և երգել, որ հանրապե-տութեան հաւատարմը կը մնան, և վերջա-պէս նրանց այս թշնամական ցոյցերը պէտք է պատժվեն և զինուորական դ ի ս ց ի պ լ ի ն ա յ ի հիման վրա:

Մի քանի ժամանակ է որ Լիծում նկատ-ված է, որ մի քանի երիտասարդներ յաճա-խում են բժնապարտեան պատարագներին, և դէպի հանրապետութիւնը ամենավերաւորե-ցուցիչ խօսքերով են վերաբերվում:

Մի քանի Ֆրանսիական լրագիրներ ասում են, որ եթէ պատերազմական մինիստրը ան-պատիժ Թոլնի այս յանդուգներին, և նրանց զինուորական կանոնադրութեան համաձայն խիստ պատասխանատուութեան չեմթարկէ, այն ժամանակ նա կատարեալ միջոց կը տայ

և շատ ուրիշների քաջակրթութեան և ոգևո-րութեան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«KABKABE» լրագրի № 179 մէջ տպեցաւ թէ առև և թէ տեղական լեզուներով հրապարակական դատախաութիւնները կարողաւ. համար թիֆլիս-սում կազմվող մասնաժողովի պրօէկտը: «Մշակի» հետեւեալ համարները մինում կը ծանօթացնենք մեր ընթերցողներին այդ պրօէկտի հետ:

Պ. Պոլիակով գիտնականը, որի մասին մենք յի-շեցինք մեր համարներից միում, յանձնարարու-թիւն ունի ուսումնասիրել զլատաւորացէս երեա-նեան նահանգի հնութիւնները: 1881 թին թիֆ-լիսում լինելու է ընդհանուր ուսաց հնագիտա-կան (արխեոլոգիական) կոնգրէս և պ. Պոլիակովի աշխատանքները պէտք է պատրաստական աշխա-տանքներ համարվեն այդ կոնգրէսի համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆԱ, 16/28 օգոստոսի: Լրագիրները Դաշտէյից հաղորդում են, որ կոմս Անդ-րաշի հասաւ այնտեղ, և առաւօտեան 11 ժամից սկսած մինչև երեկոյեան 4 ժամը նա անցկացրեց Բիւմարկի մօտ: Ճաշից յետոյ նրանք երկուսն էլ կառքով գրասենյու գնացին:

ԼՈՆԴՈՆ, 16/28 օգոստոսի: Իօկալամայից հեռագրում են այստեղ, որ առաւ Եւօր-դէնշտէյը՝ անունով շոգենաւը՝ Նեմօրի մօտ խորատուղիցաւ: Ծառայողները և ճանապարհ-հորդները ապառված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 93 ր. 25 փ., երրորդ 93 ր. 87 փ., չորրորդ 93 ր. 25 փ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 322 ր. 55 փ., երկրորդ 232 ր. 25 փ., արևե-լեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 92 ր. 25 փ., երկրորդ 92 ր. 12 փ., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 91 փ.: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ներից, դա ծառայում էր այն ժամանակ, երբ ա-դայի հայրը մտաւ ճանապարհները՝ էր պարապվում: Աւերված էր և մարազը. դա ներկայացնում էր մի փոքրիկ հողային բլուր, որի մէջ դեռ երևում էին շինուածքի փայտեղէն մասնիկներ: Ամեն տեղ նկատ-վում էր աւերածներ, փայտակերպ և անկնամ թողված շինուածքներ, կարծես, այդ ողորմելի շի-նու թիւնների մէջ հարկը տարուց աւելի մի ուրիշ վարպետ չէր մտել, ոչ մի կարկառան կամ նորո-գութիւն չէր եղել.—ինչ որ մաշվել էր, ինչ որ քանդվել էր, ինչ որ թափվել էր, այնպէս էլ մը-նացել էր: Իսկ այստեղ բնակվում էր ամբողջ դա-ւառի առաջին հարկաւորը, քաղաքի գլխաւոր ա-զան: Այստեղ ռուսիկ աքաղաղը իր հրաշալի զօ-րութեամբ ոսկու կոյտեր էր դիզում...

Մի փոքր կենդանութիւն երևում էր պարտէզի մէջ: Պարտէզը բաւական ընդարձակ էր: Թէև բոլոր ձեռքերները պատած էին վայրենի կերպով դա էլ թողած էր անխնամ, թէև անած բոյսերով, բայց հնադարեան ծառերը դեռ մաքրում էին մանուսն հետ, կարծես ստեղծի, ամենը դեռ ևս, պիտի սպրնէ... մենք մարդու ձեռքերին աւելի կարօտութիւն չունենք...

Կենտրոն այդ տիպի և անապատացած աւերակ-ների մէջ բոլորովին համապատասխանում էր իր շրջապատին: Կենտրոն սահում էր նոյնպէս միօրի-նակ, նոյնպէս անփոփոխ և նոյնպէս դատարկ կերպով, որպէս անփոփոխ և դատարկ էր մնա-ցել տան բոլոր շէնքեր, որ իր վրա ոչ մի նորոգու-թիւն չէր ընդունում: Որքան, ամբողջով, տարիներ-ը անցնում էին միմեանց ետեից, շատ բան աշ-խարհի մէջ փոխվում էր, շատ սովորութիւններ նոր ձև էին ստանում: Բայց Մասիսեանի տան կիսանքի և ասլուտով ձեռքի մէջ ոչինչ նորու-թիւն չէր մտնում: Աւերակների անշարժութեան հետ տիրում էր և քաղաքը և մեծած կենտրոն անշարժութիւնը: Մասիսեանը նոյն հայեացքն ու-նէր կենտրոն վրա, ինչ հայեացք որ ունէր իր տան շէնքերի վրա.—ինչ որ հին է, այն նուրբական է, ուրեմն պէտք է մնայ և անփոփոխ մնայ, թէև մաշված լինէր, թէև փտած լինէր: Դա որպէս չէր փոխում այն հնացած և ջարդված դուռը, որի միջով ներս էր մտնել և դուրս էր եկել նրա հայրը,

պապը և պապի պապը.—այնպէս էլ չէր փոխում այն սովորութիւններից և ոչ մի կէտ, որով ապ-րել էին նրա նախնիքը:

Մասիսեանի ամբողջ ընտանիքը նմանում էր մի բաղադրեալ մեքենայի, որի գլխաւոր ճակա-րակը էր ինքը.—աղան: Դա դէպի որ կողմը և պտղովում էր, բոլորով իր հետ մի և նոյն ուղղու-թեամբ, պտղող էր տալիս: Վաչ նրան, որ յետ կը մնար. կը հակառակէր... Դա էր ամենի հա-մար կենտրոն օրինակելի պատկերը, մնացած բո-լորը պէտք է հետեւէին նրա օրինակին.—պէտք է ուտէին, ինչ որ նա սիրում էր ուտել, պէտք է խօսէին, ինչ որ նա սիրում էր խօսել, պէտք է լինէր, երբ նա էր քնում, պէտք է վերելայայնէ, երբ որ նա էր վերելում, մի խօսքով, նրա ձա-շակը ամենի ճաշակն էր, նրա խելքը ամենի խել-քն էր...

Ամեն առաւօտ, երբ նա դնում էր բազար, աւում էր ճաշի և ընթերցի համար այն պաշար-ները միայն, որ ինքը սիրում էր ուտել, և ամեն օր, խիստ սակաւ բացառութեամբ, պատրաստել էր տալիս մի և նոյն կերակուրները: Այսպէսով կարելի էր զգուշ, կարելի էր ախտորոշել կորցնել, բայց ինչ փոքր, երբ աղան սիրում էր մի շարքի շարունակ խաշ ուտել, մի շարքի տօրմա կամ քուլիկա ուտել: Երբ տօրման էր բար-ձրանում ձեւի, էդ ինչ է, ամեն օր մի և նոյն խաշ, մի և նոյն պատրաստում լինում էր. ձիւնու ևս չիմ մուշումում: Դա ամեն ինչ փորձում էր իր ձեռքով տեսակէտից. ինչ որ նրա ձեռքն չէր վնա-սում, ուրիշին էլ չէր կարող վնասել. ինչ որ նրա ձեռքն համար լաւ էր, ախտորոշել էր, պէտք է ա-մենի համար լաւ լինէր.—Այն այդ է և սակաւու-թեան ճիշդ պատկերը, որ երբ խառնվում է բո-ւնախառնութեան հետ, ստանում է հրէշաւոր կեր-պաւոր: Մասիսեանը կատարելապէս էր այդ պատկերի:

Մասիսեանի անտեսութեան մէջ բոլոր սովորու-թիւնները մնացել էին իրանց նահապետական պարզութեամբ: Կանաչը և պատառաքալը դեռ ևս մուտք էին գործել նրա սեղանի վրա. նա հայրը դանակով կտրելը մեղք էր համարում: Ամեն թան-

ձըր կերակուր ուտում էին ձեռքերով, միայն ջրակի կերակուրներին համար դրգալ էր գործ ած-վում: Աղան միշտ միմեան էր ճաշում, և այն ժա-մանակ, երբ տանը հիւրեր չը կային, բայց հիւրեր նա միշտ ունենում էր, օտարների վերաբերու-թեամբ նա ժպտ չէր. հայրը շատ բան կարող է չլինել. ասում էր նա սովորաբար: Բայց բանն այն է, որ հիւրերին ևս մի և նոյնն էր ուտացնում, ինչ որ ինքն էր սիրում: Մասիսեանի տան ամեն օրվայ խաշը և քուլիկան առակ էր դարձել: Ստե-փանը սկզբում հօր հետ էր ուտում, երբ նոր ա-ւարտել էր և նոր էր դարձել թիֆլիսից, բայց այն օրից, երբ նա իր հօրը ատելի դարձաւ, հե-տեանպէս և զրկվեցաւ նրա սեղանից: Դա ուտում էր այնուհետեւ, մօր հետ, որը իր ազդիկներին հետ առանձին սեղան էր նստում: Արեւական սովորու-թիւններից առաջ եկած այդ առանձնութիւնը մի բան էր ամեն վայելչութիւնից զրկված դե-ղատանի համար: Տիկին Մարիամը երբեմն իր գաւառիկները աղաչանքին զիջանելով, զաղտնի պատ-րաստել էր տալիս մի կարկաղուր, որ աղան չէր պատուիրել, բայց երբ յայտնվում էր զգոյու-թիւնը, այն ժամանակ յիշոցները և կուրի վերջ չունէին:

Աստուծոյ առանձին ողորմութիւնը պէտք է համարել, որ աղան—ընտանիքի հրէշը—ամբողջ օրը տանը չէր դառնում: Վաղ առաւօտեան նա ուտել էր ժամ, այնտեղից դիմում էր խանութ, դուր մնում էր բոլոր ցերեկը մինչև արևի մտնելը և երեկոյեան դառնում էր տուն: Դրա բացակայու-թեան ժամանակ ընտանիքը աւելի ազատ էր ըզ-գում իրան, կարող էր հանգստանալ, կարող էր զուարճանալ: Իսկ այդ զուարճութիւնը սահմա-նափակված էր տան չորս պատերի մէջ, որին ա-ւելի նպաստում էր պարտէզը: Պարտէզի մէջ կար մի հին լճակ, որ միշտ լիքն էր լինում ջրով, նրա բոլորովը չըմպատած էր անազնի ծառերով, որոնք աճելով, իրարանցնելով, կազմել էին լճակի վրա խիտ գեղեցիկ կամարներ սաղարթախիտ ոտներով: Արեւգալի ճառագայթները երբեք մուտք չէին գործում այնտեղ, և ամառվայ սաստիկ օ-թերի ժամանակ միշտ կարելի էր գտնել այդ լճակի հովանաւոր ափերի մօտ խիստ ախորժիկ գոլու-

թիւն: Այնտեղ տիկին Մարիամը իր գաւառիկների հետ անցուցանում էր ցերեկվայ հանգստի ժա-մերը, երբ ազատ էր լինում անապի գործերից: Գալիանէն և Հոսիսիմէն, նստած մէկը միւսի մօտ, ծառերի շուրջի տակ տարածված գորգի վրա, իրանց մանրիկ մատիկներով կամ կարում էին, քրչիքում էին, ծիծաղում էին, և կամ ձան-ձրանալով, կարը մի կողմ թողնելով, սկսում էին հացի փշրանք շաղ տալ լճի մէջ, դուրս հրաւրե-ծներին, որոնց թոթաւը աւելի էր զուարճաց-նում երկայնիկներին: Մայրը նայում էր նրանց վրա և ուրախանում էր: Այնտեղ հանգստանում էր և Ստեփանը, երբ յոգնած, թուլացած տուն էր դառնում իր մասնաւոր դասերից, որ տալիս էր զանազան աներում:

Արեւելեան տաք երկրներում, որոնց թում կա-րելի է համարել և Ն...քաղաքը, առատ ջուրը և ընդարձակ պարտէզը բաւելի մէջ մի առանձին միսթարութիւն է փակված ընտանիքի համար, որ տնից դուրս գուրկ է մնում բոլոր զուարճութիւն-ները: Մասիսեանի տան մէջ այդ կարեւորութեանը մասամբ բաւականութիւն էր տալիս նրա պար-տէզը: Եթէ ոչ, խոնաւ օդից և լոյսից զրկված, նեղ սենեակները բոլորովին կը մաշէին, կը ապ-անէին բնակիչներին, եթէ պարտէզը չը լինէր: Տա-րուայ երեք եղանակների մեծ մասը—գարունը, ամառը և աշունը—համարեալ այնտեղ էին անցկա-ցում: Այն տեղ ծառերի հովանու տակ, լճակի ափերի մօտ ճաշում էին, հիւրեր էին ընդունում, այնտեղ պարապվում էին, և այնտեղ գիշերները քնում էին առանձին պատրաստված «քէթի-ր-ն երկ» *): մէջ: Ընկերութիւնը ծառերի, խոտերի, ծաղիկների և թռչունների հետ, մօտեցնում է մարդուն այն երանական կենտրոն, որ աւելի մօտ է բնութեանը:

(Եւ շարունակվի)

*) Քէթիր մի տեսակ քառանկիւնի, մեծ ար-կղի ձև ունեցող, տախտակներով շինված, շարժա-կան սենեակ է, որ բարձրացնում են չորս երկայն սիւների վրա, տնրի պարտէզների մէջ, կամ կը-տուրների վրա: Նրա մէջ քնում են ամառը, որով-հետեւ համ զով է լինում, համ պահպանում է մօ-ծակներից և այլ թռչուններ միջատներից:

